ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

02.07. 2016թ. Քաղաք Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Ա. Սարիբեկյան

Ֆակուլտետի գիտխորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին գիտխորհրդի անդամները, հրավիրված էին ԵՊՀ Իմ տնօրեն Ս. Առաքելյանը, Ուսումնամեթոդական վարչության պետ Ա.Դավթյանը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Լսել ֆակուլտետի դեկանի ամփոփ հաշվետվությունը ընթացիկ ուս. տարվա վերաբերյալ:
/Զեկ Ն. Խուդավերդյան/
2.Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածությունների քննարկման և հաստատման մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
3.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

***1.Լսեցին - Ն. Խուդավերդյանին***

Նա ներկայացրեց 2015-2016 ուս տարվա ամփոփ հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է):

***Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Գ. Միրոյանը, Գ. Ավետիսյանը***

Նրանք բարձր գնահատեցին հաշվետու ժամանակահատվածում դեկանի կատարած աշխատանքը:

***Որոշեցին – հաշվետու ժամանակաշրջանում գերազանց գնահատել դեկանի կատարած աշխատանքը***

*2.Լսեցին - Ն. Խուդավերդյանին*

Նա նշեց, որ ըստ 2016-2017 ուս. տարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաները (դասընթացները) երկու մասնագիտական ամբիոնների կողմից բաշխված են , բաշխվել են նաև ավարտական և կուրսային աշխատանքները, ինչպես նաև արտադրական և ուսումնական պրակտիկաները: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի յուրաքանչյուր անդամ տեղեկացվել է 2016-17 ուս. տարվա իր անհատական ծանրաբեռնվածությունը:

*Արտահայտվեցին - Պ. Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը*

Նրանք նշեցին որ ֆակուլտետում գործող երկու ամբիոնների դասախոսներին տրամադրվել են իրենց անհատական ծանրաբեռնվածությունը և մինչև օգոստոսի 25-ը պետք է ամբիոններ ներկայացնեն անհատական ծարնաբեռնվածությանը համապատասխան դասընթացների փաթեթները:

***Որոշեցին -հաստատել ներկայացված 2016-2017 ուս. տարվա Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների անհատական ծարնաբեռնվածությունները:***

*3.Լսեցին - ընթացիկ հարցեր*

***3.1.Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների մասին :***

***/Զեկ Ն. Խուդավերդյան/***

Ն. Խուդավերդյանը նշեց, որ յուրաքանչյուր տարի շրջանավարտների շրջանում ամփոփիչ ատեստավորման քննություններից հետո անց է կացվում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումներ, որոնց արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս մեզ վեր հանել մեր ուժեղ և թույլ կողմերը և կատարել համապատասխան քայլեր:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ շրջանավարտների բավարարվածությունը ԲՈՒՀ-ում ձեռք բերված տեսական գիտելիքներից կազմում է 4,60 միավոր (հինգ բալանոց սանդղակով), գործնական հմտություններից՝ 4,26, իսկ մասնագիտական կարողությունների ձեռք բերման ցուցանիշը կազմել է 4,47 միավոր: Ընդհանուր առմամբ այս ցուցանիշները

ցածր չեն, սակայն հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մեր աշխատանքները պետք է ուղղորդվեն հատկապես գործնական հմտությունների ամրաբնդման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց են տալիս, որ զգալիորեն աճել է ուսանողների պրատիկայից բավարարվածության ցուցանիշը (օրինակ համանման ցուցանիշը Սերվիս մասնագիտությունում եղել 4 միավոր, իսկ Տնտեսագիտության տեսություն մասնագիտությունում 3,91, 2015-16 ուս. տարում այն համապատասխանաբար կազմել է 4,28 և 4,61):

Ընդհանուր առմամբ ուսանողների բավարարվածությունը գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից ֆակուլտետում կազմել է 4,4 միավոր, իսկ ամփոփիչ ատեստավորումից՝ 4,43 միավոր:

Անշեղորեն ավելանում է ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի ուսումնառության ռեսուրսներից ( կահավորումից, համացանցի մատչելիությունից):

Բավարարվածության աճ է նկատվել նաև գրադարանի և ընթերցասրահի սպասարկումից:

Ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի և ֆակուլտետի ղեկավարությունից , ինչպես նաև դասախոսական կազմից կազմել է 4,70 միավոր:

Բավարարվածության համեմատաբար ցածր ցուցանիշներ են արձանագրվել ուսանողական կառույցների աշխատանքից:

Ուրախալի է այն փաստը, որ ուսանողների կարծիքը կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ (դրամով գնահատականի ստացում, հովանավորչություն և այլն) գնահատվել է 0 միավոր, իսկ ԵՊՀ Իմ-ում ստացած կրթության ընդհանուր գնահատականը կազմել է Սերվիս մասնագիտությունը 4,47, իսկ Տնտեսագիտության տեսություն մասնագիտությունում 4,35 միավոր:

Դրական ենք համարում այն փաստը, որ մեր շրջանավարտները այն հարցին, թե խորհուրդ կտաք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ Իմ Սերվիս մասնագիտությունում կազմել է 88,9% , իսկ Տնտեսագիտության տեսություն մասնագիտությունում՝ 85,3%:

***Որոշեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:***

***3.2.Լսեցին - 2016-17 ուս. տարվա Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին:***

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Հ. Մարզպանյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը ներկայացրին 2016 - 2017 ուս. տարվա համար նախատեսված ամբիոնների աշխատանքային պլանները:

Հ. Մարզպանյանը նշեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ընթացակարգերն ու գործընթացները, ինչը նպաստում է ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ամբիոնի աշխատանքների ակտիվացման գործին: Այդ աշխատանքը պետք է սկսել 2016-17 ուս. տարվա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի ճշգրտմամբ: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչը ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց 2016 – 2017 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը նշեց, որ քննարկման ներկայացված ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը ներառում է ֆակուլտետի ռազմավարական ծրագրի, դասախոսների անհատական զարգացման պլանների և ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ինչը կնպաստի ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ուսման որակի բարձրացման գործին:

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանը ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացրեց 2016 -2017 ուս. տարվա ամբիոնի աշխատանքային պլանի նախագիծը /նախագիծը կցվում է/:

***Արտահայտվեց - խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը***

Նա հայտնեց, որ կատարված ուսումնասիրության և համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ ամբիոնների աշխատանքային պլանները՝ ըստ թեմատիկ և ժամանակագրական կառուցվածքի, համապատասխանում են ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին և հավանություն տալով ներկայացրեց քննարկման ու հաստատման:

***Որոշեցին -հաստատել 2016-17 ուս. տարվա §Ընդհանուր տնտեսագիտության/ և §Տուրիզմի կառավարման և մշակութաբանության/ ամբիոնների աշխատանքային պլանները:***

***3.3.Լսեցին - ՀՀ տնտեսական աշխարհագրություն ուսումնական ձեռնարկը /հեղինակներ Վ.Վ. Գրիգորյան և Ա.Ե. Ոսկանյան/ հրատարակության երաշխավորելու մասին:***

***/Զեկ. Գ. Հովհաննիսյան/***

Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց Վ.Վ. Գրիգորյանի և Ա.Ե. Ոսկանյանի հեղինակած ՀՀ տնտեսական աշխարհագրություն ուսումնական ձեռնարկը, նշելով, որ այն օգտակար կլինի և՛ Տնտեսագիտության տեսություն, և՛ Սերվիս մասնագիտությունների ուսանողների համար: Այն կհամալրի հայերեն լեզվով մասնագիտական գրականության պակասը:

***Որոշեցին - Միջնորդել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին երաշխավորել Վ.Վ. Գրիգորյանի և Ա.Ե. Ոսկանյանի ՀՀ տնտեսական աշխարհագրություն ուսումնական ձեռնարկի հրատարակումը***:

***Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի ամփոփ հաշվետվությունը 2015-2016 ուս. տարվա վերաբերյալ***

Համաձայն ֆակուլտետի Գիտ խորհրդի 2015 -2016 ուս. տարվա հաստատված աշխատանքային պլանի, ձեզ եմ ներկայացնում 2015-2016 ուս. տարվա ամփոփիչ հաշվետվությունը, հետևյալ կառուցվածքվ՝

1. Կամփոփվի 2015-2016 ուս. տարվա ամառային քննաշրջանի արդյունքները
2. Կներկայացվի ընթացիկ տարում դեկանատի կողմից իրականացված կազմակերպական աշխատանքները
3. Կամփոփվի և գնահատական կտրվի ֆակուլտետում գործող երկու կառուցվածքային ստորաբաժանումների՝ մասնագիտական ամբիոնների գործունեությանը
4. Կամփոփվի ֆակուլտետի ըստ մասնագիտությունների ավարտական աշխատանքների պաշտպանության և ամփոփիչ քննությունների հանձնման արդյունքները:

Առաջին հարցի վերաբերյալ, նշեմ, որ 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի քննարշրջանի ստուգարքների և քննությունների արդյունքները ըստ ֆակուլտետում գործող կրթական ծրագրերի դեկանատի կողմից ամփոփվել և վերլուծվել է ամենայն մանրամասնությամբ: Ուստի ներկայացնեմ, որ քննաշրջանը կազմակերպվել է թվով 103 /28 անվճար, 75 վճարովի/ ուսանողների համար, այդ թվում <Տնտեսագիտության տեսություն> մասնագիտության՝ 69 /16 անվճար, 53վճարովի/ ուսանողի և <Սերվիս> մասնագիտության 34 /12 անվճար, 22 վճարովի /:

Արդյունքում, ստուգարքներն ու քննությունները դրական են հանձնել թվով՝ 79 ուսանող /48 տնտ. տես., 31 սերվիս/: Հետևաբար ընդհանուր առաջադիմությունը կազմել է 77 %: Համեմատած նախորդ /2014-2015/ ուս. տարվա համապատասխան կիսամյակի առաջադիմության ցուցանիշի /72%/ հետ գրանցվել է 5 % աճ, իսկ 2015 - 2016 ուս տարվա առաջին կիսամյակի ցուցանիշի /67%/ հետ 10% աճ:

Սերվիս մասնագիտության նախորդ տարվա 78% դիմաց 91%՝ աճել է 13%

Տնտ. տեսություն մասնագիտության նախորդ տարվա 69 % դիմաց 70 %՝ աճել է 1 %-ով:

Ուստի, արդյունքները կարելի է համարել բավարար (բարեխղճորեն կատարած աշխատանքի հետևանքլ Ե

Ստորև ներկայացնեմ առաջադիմությունը ըստ մասնագիտությունների և կուրսերի

<Տնտ. տես.>

***Առաջին կուրս***

Ուսանողների թիվը 19 /6 անվճար, 13 վճարովի/, քննաշրջանը դրական են հանձնել թվով 13 ուսանող և պարտք ունեն 6-ը: Հիմնական պարտքերը գրանցվել են մասնագիտական չորս առարկաններից՝

1. Մաթ անալիզ -2 առաջադիմությունը 68%
2. Վերլուծական երկր. և գծ. հանր. առաջադիմությունը 80%
3. Տնտ. տեսություն -2 առաջադիմությունը 80%
4. Հայ. պատմ. հիմն. -2 առաջադիմությունը 80%

Կուրսի ընդհանուր առաջադիմությունը 68,14%, համեմատած նախորդ կիսամյակի համապատասխան ցուցանիշի (71%) հետ, այն նվազել է 3%-ով, իսկ նախորդ տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (48,4%) հետ աճել է 20%-ով:

***Երկրորդ կուրս***

Ուսանողների թիվը 29 /5 անվճար, 24 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 17 ուսանող և պարտք ունեն 12-ը: Կուրսի ընդհանուր առաջադիմությունը 59 %: Համեմատած նախորդ կիսամյակի ցուցանիշի (34%) հետ, այն աճել է 25 %-ով, իսկ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (86%) հետ նվազել է 27%-ով: Ուսանողները պարտքեր են գրանցել գրեթե բոլոր առարկաներրց (բացառությամբ համաշխարհային տնտեսություն և տնտ. իրավիճակների մոդելավորում), մտահոգիչ է կուրսայինների պաշտպանության արդյունքը:

***Երրորդ կուրս***

Ուսանողների թիվը 21 /5 անվճար, 16 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 18 ուսանող և պարտք ունենն 3-ը: Կուրսի ընդհանուր առաջադիմությունը 86%: Համեմատած նախորդ կիսամյակի ցուցանիշի (52%) հետ, այն աճել է 34%-ով, իսկ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (77%) աճել է 9%-ով:

***<Սերվիս>***

***Առաջին կուրս***

Ուսանողների թիվը 10 /4 անվճար, 6 վճարովի/, քննաշրջանը դրական են հնաձնել բոլորը:

Կուրսի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 100%, համեմատած նախորդ կիսամյակի համապատասխան ցուցանիշի (89%) հետ, այն աճել է 11 %-ով, իսկ նախորդ տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (69%) աճել է 31%-ով:

*Երկրորդ կուրս*

Ուսանողների թիվը 10 /4 անվճար, 6 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 8 ուսանող և պարտք ունեն երկու ուսանող: Կուրսի ընդհանուր առաջադիմությունը - 80 %: Համեմատած նախորդ կիսամյակի ցուցանիշի (83%) հետ, այն նվազել է 3%-ով, իսկ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (93%) հետ նվազել է 13%-ով, արն այդքան էլ մտահոգիչ չէ քանզի գործ ունենք փոքր թվերի հետ:

*Երրորդ կուրս*

Ուսանողների թիվը 14 /4 անվճար, 10 վճարովի/: Քննաշրջանը դրական են հանձնել թվով 13 ուսանողներ և պարտք ունի 1-ը: Կուրսի ընդհանուր առաջադիմությունը 93%: Համեմատած նախորդ կիսամյակի ցուցանիշի (93%) հետ, այն մնացել է նույն մակարդակի վրա, իսկ նախորդ ուս. տարվա համապատասխան կիսամյակի ցուցանիշի (72%) աճել է 21%-ով

Ամփոփելով նշեմ, որ դրական փաստ և միտում եմ համարում, այն հանգամանքը, որ ֆակուլտետում անվճար համակարգում ուսումնառվող ուսանողները ցուցաբերել են գրեթե 100% առաջադիմություն (բացառությամբ տնտ. տես. I կուրս 93% ): Քննաշրջանի արդյունքում 11 ուսանող գրանցել է բացարձակ գերազանց առաջադիմություն (5 տնտ. տես., 6 սերվիս): Կազմակերպված գործընթացները չեն բողոքարկվել որևէ ուսանողի կողմից: Ուստի և կարող եմ պնդել, որ այն անցկացվել է օբյեկտիվ և պատշաճ մակարդակով:

2. Անդրադառնալով երկրորդ հարցին, նախ նշեմ, որ բուհական համակարգում տեղի ունեցող բոլոր փոփոխություններն ու նորարարությունները մշտապես մեր ուշադրության կենտրոնում են և կանոնավոր կերպով տեղ են գտնում մեր ֆակուլտետում, մասնավորապես՝ ուսուցանվող մասնագիտություններում և կրթության որակի և որակավորման մակարդակի բարձրացման նպատակներով:

Այստեղ հարկ եմ համարում նշել, որ դեկանատը ցուցաբերում է բաց, հրապարակային գործելակերպ, իր գործառույթների շրջանակներում աշխատանքները կազմակերպելով այնպես, որ ուսանողների վերաբերյալ հրատարակման ենթակա տվյալները, մասնավորապես ակադեմիական առաջադիմությունը, լինի մատչելի և հասանելի ոչ միայն ուսանողների, այլև ողջ հանրության համար:

Քննաշրջանի ընթացքում ուսանողների յուրաքանչյուր գործընթացից գրանցված արդյունքները փակցվում են հայտարարությունների տախտակին, իսկ ըստ մասնագիտությունների ամփոփ թերթիկները տեղակայվում են մասնաճյուղի կայք էջում: Արտաքին վերահսկողության այս համակարգի իրացումը ձևավորել է ուսանողների մոտ առողջ մրցակցության հոգեբանություն, ինչն էլ ինչ խոսք դրական է անդրադարձել ուսման առաջադիմության և կրթության որակի վրա:

Դեկանատի կողմից թափանցիկ են իրականացվում նաև յուրաքանչյուր կիսամյակ կրթաթոշակների նշանակման և յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացվող փոխատեղման գործընթացները: 2015-16 ուս. տարվա ընթացքում թվով 44 ուսանողներ ներկայացվել են կրթաթոշակի, որոնցից երեքը՝ տարբեր կարգի անվանականների: Հատկանշական է, որ նշված գործընթացներում լիարժեք մասնակցություն են ունենում ֆակուլտետի ուսանողները՝ որպես գլխավոր շահառու և նշված գործընթացների օբյեկտիվության մակարդակի գնահատող: Դեկանատը մշտապես հետևողական վերահսկողություն է իրականացրել ուսանողների կարգապահության և հաճախումների հարցում. հատկապես, որ անառարկելի է այն, որ ուսանողների կարգապահության, հաճախումների և առաջադիմության մակարդակի միջև գոյություն ունի ուղիղ համեմատական կապ: Նշեմ նաև, որ դեկանատի կողմից իրականացվող գրեթե բոլոր գործընթացներին օժանդակում է ուսումնական խորհրդատուի ինստիտուտի գործունեությունը, որի արդյունքում էլ ավելի է բարձրացել է ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը, ուսանողների կարգապահության մակարդակը և հասարակական ակտիվությունը:

3.Երրորդ հարցի առումով նշեմ, որ Ֆակուլտետում խիստ ուշադրության կենտրոնում է պահվում մասնագիտական կրթության որակի և ուսանողների մոտ դրանից բավարարվածության աստիճանի ապահովման ժամանակակից պահանջները, որոնք առանց հապաղելու գործածվում են ֆակուլտետում կրթության որակի էլ ավելի բարձրացման նպատակով: Նշված խնդրի լուծմամբ հիմնականում զբաղվում են մասնագիտական ամբիոնները, որոնք իրականացնում են նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ կապված անհրաժեշտ քաղաքականության մշակումն ու իրացումը, նրանց մասնագիտական և մանկավարժական կարողությունների ընդլայնման մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Ինչպես և նախկինում, այս ուսումնական տարվա ընթացքում ևս ամբիոնների կողմից վերանայվել են առարկայական ծրագրերը, դասընթացների բովանդակությունը, ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները: Արդյունքում կազմվել են դասընթացների փաթեթներ՝ պորտֆոլիոներ, որոնք էլ պլանավորված և վերահսկելի են դարձրել ողջ դասընթացը՝ նպաստելով կրթական որակի բարձրացմանը: Նշեմ նաև, որ ֆակուլտետում գործող ամբիոններում 2015-16 ուս.

տարում գրանցվել է գիտական կյանքի աշխուժացում: Այն է. «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է մեկ մենագրություն (անգլերեն) 6 հոդված, պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն, իսկ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 11 հոդված, 1 ուսումնական և 1 ուսումնամեթոդական ձեռնարկ: Այս տարի ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառմամբ դասեր վարող դասախոսների տեսակարար կշիռը բավականին մեծացել է: Անհրաժեշտ եմ համարում նշել նաև, որ երկու ամբիոններն էլ բավականին լուրջ են վերաբերվում արտադրական պրակտիկաների ծրագրավորմանն ու կազմակերպմանը:

Ամբիոնները դեկանատի հետ մեկտեղ մեծ կարևորություն են տալիս ուսանողների շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների կարևորությանը: Քանի որ տվյալ մեխանիզմը թերությունները և թերացումները վերհանելու, վերացնելու, դրականն ու առաջադիմականը խթանելու հարցում լուրջ միջոց է:

4.Ֆակուլտետում 2015 – 16 ուս. տարում կազմակերպվել և անց է կացվել ավարտական կուրսերի համար ամփոփիչ ատեստավորումֆակուլտետում գործող Տնտեսագիտության տեսություն և Սերվիս մասնագիտությունների գծով, որն էլ կազմակերպվել է համապատասխանաբար 2016թ. մայիսի 28-ին ու 29 –ին՝ ՀՀ Կրթության և Գիտության Նախարարության բոլոր պահանջներին համապատասխան: Ամփոփիչ քննությունները և ավարտական աշխատանքների պաշտպանությունները անց են կացվել կազմակերպված՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:
Տնտեսագիտության տեսություն մասնագիտության ամփոփիչ քննությանը մասնակցել են թվով 35 շրջանավարտներ, նրանցից 12-ը գնահատվել են գերազանց, 12-ը՝ լավ 11-ը՝ բավարար շ անբավարար գնահատական չի գրանցվել: Գերազանց և լավ գնահատականների արժանացած ուսանողների մակարդակը բավական բարձր էր, այդ իսկ պատճառով 7 ուսանող մասնաճյուղի կողմից երաշխավորվել են ուսումը շարունակելու մագիստրատուրայում /ԵՊՀ համապատասխան ֆակուլտետում/: Իհարկե կային նաև զգալի թվով ուսանողներ, որոնք աչքի չընկան մասնագիտական բարձր (ունակություններով), գիտելիքներով (պատրաստվածությամբ)
Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցել են 35 շրջանավարտներ, որոնցից 14-ը գնահատվել են գերազանց, 12-ը՝ լավշ 9-ը՝ բավարար :
Ընդհանուր առմամբ Տնտեսագիտության տեսություն մասնագիտության ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները կարելի է համարել բավարար ՝ միաժամանակ ներկայացման հետևյալ առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ

1. ուսումնական գործընթացում հատկապես ուշադրություն դարձնել ուսանողների մասնագիտական միջին մակարդակի բարձրացմանը, խստացնել վերաբերմունքը հատկապես թույլ սովորող ուսանողների նկատմամբ,
2. ուշադրություն դարձնել տեսություն –պրակտիկա կապի ամրապնդմանը,

3. առավել ուշադրություն դարձնել ուսանողների մոտ բանավոր խոսքի (արտահայտման) և ինքնուրույն մտածելու կարողությունների ձևավորման վրա:
□Սերվիս□ մասնագիտության ամփոփիչ քննությանը մասնակցել են 18 շրջանավարտներ: Նրանցից 11-ը գնահատվել են □գերազանց□, 4-ը՝□լավ□շ 3-ը՝□բավարար□Ե □Գերազանց□ գնահատական ստացած ուսանողները ցուցաբերեցին բավականաչափ բարձր մակարդակ և նրանց կարելի էր երաշխավորել ուսումը մագիստրատուրայում շարունակելու համար (սակայն ցանկություն հայտնեցին միայն երկուսը)
Ավարտական աշխատանքների պաշտպանությանը մասնակցեցին 18 շրջանավարտներ, որոնցից 9-ը գնահատվել են □գերազանց□, 5-ը՝□լավ□շ 4-ը՝□բավարար□ : Ավարտական աշխատանքները հիմնականում առանձնացան իրենց վերլուծական և կատարողական բարձր մակարդակով:
□Սերվիս□ մասնագիտության ամփոփիչ ատեստավորման արդյունքները առանձնահատուկ տպավորիչ էին, այնուամենայնիվ ամփոփիչ քննության ու ավարտական աշխատանքների մակարդակը էլ ավելի բարձրացնելու համար անհրաժեշտ է.
1. Առավել ակտիվացնել ուսումնական գործընթացին շահագրգիռ կողմերի /զբոսաշրջային օպերատորների, հյուրանոցային ծառայություններ մատուցողների և ոլորտում այլ գործատուների/ մասնակցության ապահովման գործընթացը,
2. առավելագույնս ակտիվացնել կրթական ծրագրերի և չափորոշիչների մշակման գործընթացին շահագրգիռ կողմերի մասնակցության աստիճանը,
3. բարելավել ամփոփիչ քննության հարցաշարերը՝ ապահովելով տարբեր դասընթացների վերաբերյալ հարցերի համամասնությունը,
4. ավարտական աշխատանքներում էլ ավելի ուշադրություն դարձնել վերլուծական և խնդիրներին լուծումներ տալու հմտություններին և պրակտիկ մոտեցումներին,
5. ընդլայնել ավարտական աշխատանքների կիրառական կողմը:
Ընդհանուր առմամբ, նշեմ որ, երկու հանձնաժողովների նախագահները իրենց դրական կարծիքները հայտնեցին ֆակուլտետում ուսումնամեթոդական աշխատանքների վերաբերյալ: